



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Գ. — ՇՐՋԱՆ ԺԳ.

1881

ՏԱՐԻ ԺԳ. ՄԱՐՏ 31.

ՀԱՏՈՒՅՈՒՄՆ.

Ոչ թէ վատ ժամանակներն են մարդիս վատացնողը, այլ վատ մարդիկն են ժամանակը վատացնում:

Մի ազնիւ ազգ իւր յետին անբաղոտութեան մէջն եւս պատուելի է, եւ դորանով իսկ արդէն բոլորովին ողորմելի չէ եւ չհամարւիր, Այդպիսի ազգի քաղաքացիների առաքինութիւններով գալու շատ ու շատ անբաղոտութիւնները կքիչանան: Իսկ սորա հակառակ, երբ որ մի ազգի բարոյականութեան, խաղաղութեան օրերում, հոգ ու խնամք տարած չէ երկրի կառավարիչների թուլութիւնից ու անհոգութիւնից, կամ հոգեւոր ուսուցիչների ու աշխարհական դաստիարակների անտարբերութիւնից, խառնակ ժամանակներում, երբ որ քաղաքական օրէնքների խտութիւնը չէ ներգործում, մին մինի ետեւից գալիս են այն ամենայն անկարգութիւններն ու եղծումները, որոնք կարող են դուրս գալ ապերասան կրքից, այն սանձարձակ ու կտտաղի կրքից, որոյ համար ամենայն սարսափելի անօրէնութիւն անելը ամենեւին դժւար չէ: Ասպը կըտրած զինւորականների ամարդի վարմունքը, մոլութեան օրինակների անպատիժ մնալն, արդէն անտարբերութեամբ, սառն աչքով են նայել տալիս այն անպիտանութիւնների, այն բողո-

քիչ յանցանքների վերայ, որոնք յառաջ սարսափ էին բերում իւրեանց վերայ, երբ որ լսում: իմանում էին, կամ տեսնում: եւ այն մեծ բազմութիւնը հասարակ մարդիկների, որոց ձեռքից ոչ լաւն էր գալիս, ոչ վատը, չար ցանկութիւններով զօրացած ու վառւած, առանց աջ ու ձախ մտիկ տալու, իւրեանց մտքին եկած ու ու սրտի ուզեցած ամենայն վատ բանն անուժեն առանց ամաչելու կամ վախենալու: Այդպիսի ժամանակ ամեն մի մարդ մտածում է միայն, որ ուրիշներից բարձր լինի, ուրիշների վերայ ոյժ ու իշխանութիւն ստանայ. ամեն մի մարդ այն է միայն մտածում, որ մի կերպ շատ փող ձեռք ձգի, հարբստանայ, ինչ ճանապարհով ուզում է լինի: Բայց փոթորիկն անց է կենում, դարձեալ ամենայն բան իւր առաջւան կարգին է գալիս եւ հետը միասին աչքի են ընկնում իմացում եւ զգալի լինում այս ամենայն յայտնի ու ծածուկ թշուառութիւնները, որ գործւած չարագործութիւնների շատ երկար քաշող վնասակար պտուղներն են մնում: Այլ որ իւր նման մարդին յետին անբազդութեան դուռն է հասցրել, մի ուրախութիւն չկայ սրտումը, բազաւոր եմ, ասել չէ կարողանում. ով որ ուրիշի ունեցածը ձեռքից քաշել, առել է, յաջողութիւն չէ տեսնում:

Գժւար թէ կայ մի մոլութիւն, որ առհասարակ մարդիկ աւելի առեն, եւ որ այնպէս շուտ իւր պատիժը ստանայ, ինչպէս որ կարճ ժամանակւայ մէջ պատժւում է այն անիրաւ խարդախութիւնը, որ ուրիշի ունեցածն իւր տակն է քաշում վատ ճանապարհով: Անպիտան մարդիկն անգամ իրանց միջից դուրս են ձգում իրանցից աւելի անպիտանին, որ խորամանկութիւնով իւրեանց հետ խարդախ կերպով է բան բռնում:

Անիրաւ խարդախութիւն, կամ խորամանկ խարհրայութիւն որ ասում են, խօսքս միայն այնպիսի մարդիկների վերայ չէ, որ հասարակ գողութիւն են անում, իւրեանց տակը ժառանգութիւն քաշում, սուտ փող շինում, ուրիշի հողը, (գետինը, տափը) իւրեանց օգտին, կամ իրանց կաշառք տուողի օգտին ծուռ չափելով պակասեցնում, կամ այս տեսակ շատ ու շատ ծանր յանցանքներ անում եւ իւրեանց այդպիսի գործքովն ու խորամանգ ու խարդախ ճանապարհներով ուրիշներին իւրեանց ունեցածի մի մասից զրկելով, բանի տէր են դառնում. իւրեանց

անունը կտարել ու բոլորովին մարդկային պատուից ընկնել այսպիսի զոուելի եւ ամօթալի գործերով, որ ամենեւին զանազանութիւն չունին փողոցի մէջ յայտնի աւազակութիւն անողի արարմունքից, կարող են միայն այն մարդիկը, որոնք ոչ մի անպատուութիւնից ու խայտառակութիւնից չեն քաշուում եւ որոց համար պատիւ ու ամօթ ասած բանդ չկայ, այլ ընդհակառակն: Բարոյապէս, այն աստիճանի անարգ մարդիկ են, որ իւրեանց համար լրբութիւնը առաքինութեան տեղ է անց կենում: Տեսակ տեսակ ուրիշ շատ գողութիւններ կան, որ շատ շուտ շուտ են լինում եւ խկոյն աչքի չեն ընկնում, չեն իմացւում, շատ անգամ պատահումէ, որ երկար ժամանակ ծածուկ են մնում եւ այս միջոցին այդ անպատիւ գործի տէր մարդիկը, որոց յանցանքները քանի որ դեռ եւս չեն յայտնւած ու ոչ մի մարդ չէ իմացած, մի ժամանակ աշխարհիս մէջ բարի անուն ունենալու ետելիցն եւս են ընկնում:

Այսպէս կան մարդիկ, որոց հաւատացել են ուրիշի փողերն ու եկամուտները, եւ դռքա աններելի կերպով իւրեանց օգտին են գործ ածում, գողանում են, կամ մինչեւ անգամ իրանց տակը դնում եւ խորամանկ ու խարդախ ճանապարհներով իսկական տիրոջ ձեռքից ունեցածն հանում, յափշտակում, դափ ու դադարի թողնում: Անպիտան գողերից ամենեւին պակաս չեն այդպիսիքը, բայց իւրեանց արդար պատիժն եւս ստանում են, երբ որ իւրեանց արած գողութիւններն յայտնւում են, որ շուտ թէ ուշ պէտք է բացւին:

Նոյնպէս կան որբերի եւ այրիների խնամակալներ, հոգաբարձուներ, բարեգործական ընկերութիւնների մեծաւորներ ու գոցա նման մարդիկ, որ խարդախ հաշիւներ են պահում, ուր ծախքեր են հնարում, որ ամենեւին չեն արած, արգիւնքներ են ծածկում, որ պէտք էր զոյց տային, ու մէջտեղ չեն հանում, որ իւրեանց օգտին մնայ եւ այդ կերպով եւս ջոկ շահւին: Ամեն աւազակների մէջ ամենապատերն ու վերջին աստիճանի անարգներն են այդպիսիքը. որովհետեւ մինչ անգամ այն ինչքի վերայ են յարձակւում, որը պահպանելու համար ժողովրդի մի ոչ փոքր մասը, գոցա հաւատարիմ մարդիկ ճանաչելով, իրանց ձեռքն է յանձնել. դռքա անհարազատ են գտնւում այն պաշ-

աօնների մէջ, որ ծանր երգումն ուտելով իւրեանց վիզն են առել ճշգրութեամբ ու սրբութեամբ կատարելու:

Նոյնպիսի արհամարհանքի արժանի են նորա, որ առեւտրական հանգամանքներն ի չարն են գործածում, որ խորամանկութիւնով ու խարդախութիւնով աւելի շահւին, քան թէ ինչքան որ պէտք էր շահւէին. սուտ պարտքեր, տալիքներ են ցոյց տալիս, միանգամ ստացած փողն ուրանում են, կրկին պահանջում, կամ բռնութեամբ ստանում. վատ ապրանքը լաւի տեղ են ծախում. ամեն կերպ սատանայական հնարքներով իւրեանց օգուտը պտուելով, ուրիշների վնասովը իրանք շահւում են, ուրիշներից փոխ են ուզում, պարտքեր անում, մտքներում գրած լինելով առածն յետ չգարձնելու, չտալու, որ յետոյ անարգ կերպով իրանց սնանկացած յայտնելով, ուրիշներից առածը կարողանան ուտել: Նոյնպիսի անարգ, ցած մարդիկ են այն խաբերաները, որ քաղաքական իշխանութեամբ տալիք իւրեանց հարկերը կերպ կերպ խաբերայական պատճառներով կամ խորամանկութեամբ սարքած հնարքներով կարողանում են փոքրացնելու. որ գործաւորների, մշակների վարձը կտրում են, որ տակնահանց գողնովի իրանց ձեռքն են ձգում ուրիշների ստանալու օգուտը, որ ձեռք էին բերել շատ ջանքով ու աշխատանքով եւ որ պիտի վայելէին օրինաւորապէս իբրեւ իւրեանց աշխատութեան պտուղ, որ վաշխառուի անօրէն մեծ շահեր են առնում իրանցից փող պարտք առնող չունեւոր մարդիկներից, արիւնն են ծծում այն ողորմելիների, որ նեղութիւնից ստիպւած իրանց են դիմում:

Ով է կարող անարգ շահասիրութեան ամեն մի տեսակը մի մի թւել, եւ այնպիսի մարդիկ են այդպիսի շահասիրութեան ետեւից ընկնողները, որ երկար տարիներով իրանցից խաբւած քաղաքակիցներից անխարդախ, ճշմարիտ ու պատուով մարդիկ են ճանաչւում, բայց վայ նորանց, նոցա ժամերն ու օրերը լրացած են, որ իրանց խարդախութիւնները յայտնւին ու խայտառակւին, ասումէ սուրբ գիրքն. « որ իւր ինչքը աւելացնուի ուրիշի ինչքով, որ ան ժամանակ պէտք է քաշէ ». ուրիշից յափշտակածը շուտ կփչանայ, մեր ձեռքում չի մնալ:

Ինչպէս որ ջուրը ամեն անմաքրութիւն իրանից գուրս է ձը-

գում փրփուրներով եւ գետը անկենդան գիակները երես է ձգում ու դուրս հանում իւր միջից դէն ձգելով, այսպէս Աստուածանից ստհամանւած աշխարհիս կարգի կապակցութեան մէջն է, որ մի ցած, անարգ արարմունք վերջապէս ինքնիրան կամ իւր հետեւանքներով, կամ մի կասկածանքով, շատ անգամ մի աննշան հանգամանքով լոյս աշխարհի առաջ դուրս գայ ու յայտնւի: Մարդիս ձեռքից չի գալ, որքան եւս ուժով կամ վարպետ մարդ լինի, այնպէս անելու, որ ոչ մի ժամանակ իւր արած վատ գործը չիմացուի: որքան եւս խորամանկ լինի մի մարդ, բայց եւ այնպէս իւր անարգ ու խարդախ գործն իբրեւ մի գաղտնիք միշտ ծածուկ պահել չէ կարող: Եւ Աստուած, որ տեսնում է ծածուկ տեղն եւս, կհատուցանի յայտնի՝ կերպով: Եթէ որ մարդ իւր խելքի ուժով, իւր խորամանկ հնարագիտութիւնով կարողանար ամօթալի գործերն յաւիտեան ծածուկ պահել, աշխարհս շատ ու շատ եւ անտանելի անբազտութիւններով լի կլինէր:

Այս է պատճառը, որ վատ գործքի տէր մարդի սիրտը, իւր մեղքը միտքը ձգող ամեն դիպուածում անհանգիստ է լինում, Նա չէ կարողանում ճշմարիտ ու պատուաւոր մարդի գովասանքն իւր վերայ լսել, առանց իւր մէջ մտածելու եւ ասելու թէ, ես այն մարդը չեմ: Նա չէ կարող, առանց իւր սիրտը ծածուկ դող ընկնելու մնալ, երբ որ ականջն է հասնում, թէ այս ինչ չարագործի արարմունքը բռնւել յայտնւել է: Այս է իւր սիրտն ուտող վաղուցան որդն, որ իրանից ոչ ձեռք է վեր առնում եւ ոչ դադար տալի. մինչեւ անգամ տարիներ են անց կենում, բայց դարձեալ միշտ ուտում է իւր սիրտն եւ ամեն անգամ այնպէս, որ իբր թէ նոր լինի իւր մէջը գոյացած այդ որդը: Երկիւղը, որ մի օր ամեն բան կ'այայտնւի, յանցաւորի շատ ուրախ ժամերը գառնացնում է: Ամեն ժամանակ եւս լաւ իմացէք պատճառը թէ, ինչո՞ւ համար այս, այն մարդն ինքն իրան կամ խելոգեց, կամ թռչնաւորեց, կամ ջուրը ձգեց, մէկ խօսքով լաւ հասկացէք թէ, ինչո՞ւ համար ինքն իւր վերայ ձեռք բարձրացուց իւր կեանքին վնաս տալու մտքով. պատճառն այն է, որ իրան համար ծանր բեռն ու անտանելի եւ անմխիթար թըշուառութիւն է դարձած իւր կեանքը, ուղում էր վերջ դնել իւր

դառն վեանքին, ինքն իրան սպանելով, որ սրժնի, ազատուի:—
 Լաւ իմացէք թէ, այս, այն մարդի անհասկանալի ու անփարա-
 տելի տխրութեան պատճառն ինչ է, որ ամենեւին սիրտ չունի
 ոչ մի բանի վերայ նայելու, ոչ մի բան աչքին չէ գալի, իրը թէ
 աշխարհս նորա համար չկայ եւ ինքն եւս աշխարհիս համար
 չկայ:—Վայ նորան, որ իւր ինչքը ուրիշի ինչքովն է աւելացնում:
 Երկա՞ր ժամանակ իւր կեանքումը կմնայ, երկա՞ր ժամանակ պի-
 տի վայելի:

Համարեա՞ թէ ամենայն ազգի մէջ սովորական մի խօսք է
 դարձած այն առածն, որ ասումէ թէ «անարդարո՞ւնի-նա՛ւ ա-նէ-
 ցած ինչքը չի ճաւ, չի աւելանալ»: Յիրաւի այս առածն աւելի
 ճշմարիտ է, քան թէ որքան կարծում են շատ անգամ: Շատ
 անգամ տեսնումէ մարդ, որ անարգար ճանապարհով ձեռք
 բերած ինչքը, հարստութիւնը դարմանալի կերպով կարճ ժա-
 մանակեայ մէջ ձիւնի պէս հալուումէ, դուր կորչում, գնում:
 Այդ ինչքի վերայ Աստուծոյ օրհնութիւնը չկայ, այլ անէծք
 կայ միայն: Կեղտոտ ճանապարհներով ձեռք բերած բանը, մեծ
 բան լինի, թէ փոքր, մարդիս բոլոր ունեցածի վրան եւս անէծք
 է բերում: Այլ եւս յաջողութիւն չկայ ոչ մի կողմից, ոչ մի բա-
 նի մէջ, ամենայն բան ձախ ու անյաջող է գնում: Աւմ վերայ
 որ օրհնէնք չկայ, փշանումէ: Հարցանումէ մարդ թէ, այս ի՞նչ-
 պէս բան է, կամ ինչո՞ւ է այնպէս լինում, ի՞նչպէս է լինում:
 Հաւատովն դու Աստուած, հաւատովն նորա հատուցանող
 տեսչութիւնը, որ ամենայն բան կարգադրում է ու անօրինում:
 Այս հատուցանող Տեսչութիւնն է, որ ամենագոր ձայնով
 հրամայումէ թէ, չարն յաջողութիւն չպիտի գանի, չպիտի դօ-
 րանայ: Անարգարութիւնը պէտք է անէծք դառնայ մարդիս
 համար, եթէ որ ծածուկ մեղաւորի մահանից յետոյ եւս նորա
 վերայ գա՞ր: Տեսե՛՛ւ ես, որ իարգախ, խորբերայ մարդի զաւակ-
 ները վայելին իրանց հօր անարգարութիւնով, անխղճմտանքու-
 թիւնով եւ խարբերայութիւնով հաւաքածը: Քիչ բանը, որ ար-
 դար մարդն ունի շատ աւելի է անասուած մարդի շատ ինչքից:

Հասոցումն անելը, Կեղք հանելը, յեղ Կարգին է-ր անչի պատի-ը
 ճանաչող մարդի պարտաւանս-նի-նն է:

Այ անխղճմտանք, անարգար մարդ, քեզ քո խղճմտանքդ

եւս ասումէ թէ, ամեն տեղ քո պարտականութեանդ հաւատարիմ չմնացիր, ինքդ խի քեզ ասումես թէ, շատ տեղ ու շատ անգամ ծուռ ու խարդախ կերպով վարեցանք: Ազատիք քեզ մշտական տանջանքիցդ, վերջ դիր սրտիդ ամեն ժամանակէայ անհանգստութեանք, որ տարիներով քեզանից չէ հեռանում: որ մահուան անկողինքիդ մէջն եւս դեռ քեզ պիտի չարչարի, եթէ որ չկարողանաս քեզանից դէն ձգել: Զուր է ինքնդ քեզ միտթարելդ, թէ ուրիշ ամեն բանի մէջ հաւատարիմ ու անխարդախ ես գտնուել: Բայց դու մէ Բան՝ մարդկային պատիւդ կորցրել ես անարդար ու խարդախ գտնուելով, այդպէս եւս մնացել ես, ինչպէս որ շատ անգամ քո խղճմտանքդ եւս ասումէ, անունդ անպատիւ մարդ ասելով: Եւ այս մէ Բանը միշտ զրկումէ քեզ այն պատուից, որ պիտի ունենայիր ինքդ եւս անքիդ առաջին: Հարկագրումէ քեզ ինքնդ քեզ մեղադրելու, վատ ասելու, թէ եւ ուրիշները ձայն չեն հանում էս մասին: Անարդարութիւնով ձեռք բերած այս ինչքը մտել է այն արդար ճանապարհով ունեցած քո միւս սեպհականութիւնիդ մէջ, ժամտախտի նման կպչումէ քո բոլոր ինչքիդ եւ կորչելու, փշանալու բան է դարձնում քո բոլոր ունեցածդ: Մի ուրախանար, որ այսօր քո հանգամանքդ լաւ է, դեռ եւս քեզ միայն յաջողութիւն է բերում. չար գործի վերայ եղած անէճքը ամենահարկաւոր տան շատ հաստատ հիմն եւս տակից փորումէ եւ մի սաստիկ քամի է պէտք, որ փչի ու քար ու քանդ անի:

Դեռ ու յետ Բանդուր կրկին, ինչ որ կեղտոտ ճանապարհով յետ է բերել. ինչքան էս ու յետդ ճանց, Բայց եւ այնպէս ասել չէ, ու անհանալի չէ, գոյու ընէ է, գոյացած Բան է: Կարելի է որ դու այնքան անամօթ մարդ ես, որ տուանց քաշուելու պատուաւոր մարդիկներին երեսին կարողանումես համարձակ նայել, ամենեւին հոգսդ չէ թէ, քեզ վերայ ինչ վատ կարծիք ունին, որ երեսդ անգամ տեսնել չեն ուզում: դու ամեն տեղ եւս գլուխդ կոխումես, ամեն լաւ մարդիկներին մէջ եւս խցկում: Բայց ի՞նչ երեսով ես ամենագէտ Աստուծոյ առաջն եւս երեւում կամ աչքդ դէպ ի երկինք ձգում — Ի՞նչ երեսով ես մտնում նորա տաճարը, քրիստոնեաների ժողովի մէջ խառնում, որ պաշտես արդար դատաւորին, Նորան, որ ամենին հատուցանողն է իւր

գործքին համեմատ. մի՞թէ դու չես վախենում, չես ամաչում նաեւ Աստուածանիցդ, Որոյ աչքից ու երեսից ձգել ես քեզ, եւ դու սիրտ ես անում ու երեսդ բռնումէ՝ Նորա առաջ գալու, կանգնելու, Նորան երկրպագութիւն անելու, Որին գործքովդ ամենեւին չես ծառայում, Նորա սուրբ անունն օրհնելու, Որին դու չես պատւում: Ի՞նչպէս ես սիրտ անում դու մօտենալ Քրիստոսի մարմնոյն ու արեանը եւ յոյս ունենում մեղքի թողութիւն ստանալու, դու որ ամեն օր շարունակում ես քո մեղքդ, յետ չգարձնելով, այլ քեզ պահելով անարգարութեամբ ձեռք բերածդ: Ի՞նչպէս կարող է արգարագատն Աստուած մի յանցաւորի անարգարութեանը ներել, երբ որ նա անարգարութիւն է անում նաեւ իւր ներումն խնդրելու բողոքում: Սիրտ պիտի անեն կեանքի մի դժւար ժամում ձեռքդ դէպ երկինք բարձրացնել պաղատելով, այն ձեռքերդ, որ ուրիշների սեփականութիւնը խարդախելով, յանցանքիդ խարանով դրոշմել ես (ինքդ քո յանցանքովդ դադմա ես խփել քո ձեռքերիդ): Դու կորցրել ես աղօթք անելու իրաւունքդ եւ Աստուածանից քո խնդիրքդ լսելու յոյսը: Այն, ինչ որ դու քաշում ես, Աստուածանիցն է վրագ եկած քեզ զգուշացնելու, քո պարտականութիւնդ միտքդ ձգելու, քո հոգիդ սրբելու եւ քո մեղքդ քաւելու համար: Յետ տուր, ինչ որ խորամանկութիւնով ձեռք ես ձգել եւ դեռ եւս ձեռքիցդ չես հանում. եւ մաքուր ու ամենայն յանդիմանութիւնից ազատ սիրտ ունեցիր: Ի՞նչն է ձեռքդ բռնում, որ չես անում ասածս: Կարելի է, այս է պատճառը որ արած անարգար գործքիդ անէծքը վրագ կատարել է արդէն, դու աղքատացել ես ու աւելի աղքատ ես, քան թէ այն ժամանակ, որ ուզում էիր ուրիշի հաշուով, ուրիշի վնասովն հարստանալ: Ի՞նչ է, չլինի՞ թէ մտքիցդ անց է կենում, որ յետ կտայիր այժմ ուրախութիւնով, ինչ որ ուրիշից քեզ ես քաշել, բայց այլ եւս հնար չկայ, որովհետեւ ձեռքումդ բան չկայ, չէ մնացել, գնացել է ու դադարի ձեռքով ես նստել, Կնա ու զղջացած սրտով խոստովանելիք այն մարդին, որ զրկել ես, մինչեւ ցայժմ ծածկել ես, իսկ այժմ բաց ասա իրան քո մեղքդ ու ցոյց տուր քո խօսքերովդ, որ սրտանց փոշիման ես քո արած վատ գործքիդ վերայ, որով պատճառ եղար նորան այնքան նե-

զուժիւնն քաշելու քո անհաւատարմութիւնովդ: Քո սիրտդ իրան բռնորովին բաց անելուցդ, քո սրտիդ խոր ու ծանր վէրքերն իրան ցոյց տալուցդ: Նորա սիրտը կշարժի: կկակզի: շատ կարելի է: ու քեզ կնեւրի: Երբ որ նա քո մեղքը կնեւրի: Աստուած եւս քեզ կնեւրի: Կու ամենայն կերպով քո խօսքերում քո արտասուքովդ քո մեղապարտութիւնդ վիզդ առնելդ ու սրտանց ու սաստիկ փոշիմանութիւնդ: զղջալդ յայանեցիր անուրանալի եւ քարը ճաքացնելու կերպով: Այդ ծանր բանը վիզ առիր, այդ դժուար քայլը արիր: ինքդ քեզ ու քո մեղքդ ճանաչելու եւ խոստովանելու: որ թեթեւ ապաշխարանք չէ մարդիս համար: որ անձնասիրութեան զօրաւոր զգացումն ունի. ուրեմն դու ինչ քաշեցիր: մինչեւ այդ բանը քեզ ստիպեցիր ու կարողացար անել: Քո սիրտդ յստակեցիր: խղճմտանքդ հանգստացաւ: վրադ ուրախութիւն եկաւ: այնպիսի ուղիղ ու իսկ հարկաւոր ճամբան բռնելդ ազնւատիրտ մարդին կշարժի քեզ օգնելու անգամ: (թէեւ դու նոցա վնաս ես տուել:

Հասարակաց աշխարհ (տեղը հանիր). եթէ ընտանիք ինչեւեք պարտաւոր չեալեցրէ զքեզ այն անելու, ինչ որ պէտք էր անելի: «բիշ կերպով, «բիշ կողմից նորան պէտք է: նորա համար «բիշ բաներ: կամ ծառայող ինչեւեք աշխարհ: Դիպւածները ձեռքիցդ մի փախցնիլ. այնպէս կգայ նորա այս: այն բանը: որ իսկ քո նորան պէտք դալուդ ժամանակը կլինի եւ քո արածդ նորա աչքում բանի տեղ: շատ կարելի է: մեծ բանի տեղ անց կկենայ: Աշխարհք է: ինչ ասես: որ չպատահի. Ետ հասարակ մարդն եւս: իրանից բարձրներին այս ու այն կերպով օգտակար լինել դեռ եւս կարող է. յետին աղքատն անգամ ահագին կարողութեան տէր մարդին կարող է օգնել: Տեղն եկաւ թէ չէ: մի քնիր, կամ բերանդ բաց արած մտիկ մի տալ: Պատճառ որ նա: ում որ դու խաբեցիր: քո մի տեսակ բարերարդ է եղել: քեզ մի կերպ լաւութիւն է արել. դու պարտական ես երկար ժամանակ այդ բանը չմոռանալու եւ միշտ նորան շնորհակալ լինելու գործքով: Ով որ քեզ հաւատացել է ու կամ փող տուել քեզ կամ մի լաւութիւն արել: քեզ մի մարդ ճանաչելով: նա միշտ քո պարտատէրն է ու դու նորա պարտականն ես: քանի որ յետ դարձրել չես: ինչ որ պէտք էր յետ դարձնելի: վճարիր ուրեմն նորան

քո նորա վերայ տաք սիրտ ունենալովդ եւ նորան անշահա-
սէք մտքով օգնութիւն հասցնելու ջանքովդ ու աշխատու-
թիւնովդ գոնէ շահն այն քո յանցանքիդ, որ արե՛լ ես նորա
գէմ:

Հասարակաց արա՛ յետ դարձնելով տեղն, ինչ որ դու ուրի-
շի ինչքից քեզ ես պահել, գողացել, կերել, խարդախութիւ-
նով տակդ դրել ու վրան նստել եւ այդպէս խղճմտանքիդ
տանջանքից ազատւիր, որ հանգիստ, համարձակ եւ ուրախ
սրտով վերեւ մտիկ տալ կարողանաս քո Աստուծուդ եւ քեզ
պէս մարդիկների վերայ: Ի՞նչն է ձեռքդ բռնում. սուտ
ամօթք: Աւրեմն աւելի լա՛ւ ես համարում քեզ համար մեղքովդ
ծանրացած սրտիդ անհանգստութիւնը, որ քեզ դադար չէ
տալիս: Մի ինչքի տէր լինելդ, որ օրէնքով քոնդ չէ եւ
չպէտք է ունենայիր, մի՞թէ արժէ քո երկար ժամանակ
ունեցած սրտի անհանգստութեանդ, որով միշտ տանջուածես
ու վախը փորումդ է, որ արածդ չծակի ու աշխարհի մէջ
չփուլի: Մի՞թէ կցանկայիր դու, եթէ ձեռքիցդ գալու լինէր,
այդ գնով մի անգամ եւս այնքան ամօթի տակ ընկնել ու
խայտառակ լինել եւ քո մահուան անկողինքիդ մէջը մի ամե-
նագառն մահով եւս մեռնել: Իմանո՞ւմես արդեօք թէ, խղճ-
մրտանքիդ սաստիկ անհանգստութիւնն ու ծանրութիւնը քեզ
ուր կարող են տանել, հասցնել, այն խղճմտանքիդ, որ քո
վատ արարմունքդ միաքդ ընկած ժամանակը, ինչ զարհուրելի
բաներ է մտքիցդ անց կացնել տալիս: Քո անբարդ ու յու-
սահատուած բոսկենքերումդ կարո՞ղ ես քեզ այնպէս պահպա-
նել, որ քո գլխիդ մի վատ բան չբերես. գու մի կարծիր, որ
միշտ այսպէս կմնաս, ինչպէս այժմ ես ու քեզ մի փորձանքի
չես բերիլ: Աւրեմն այդ սեւ օրիդ համար ես պահել ու ծած-
կում քո արարմունքդ. ուրեմն ստացած շահդ քո մեղքդ
ծածկելուցդ այդ պէտք է լինի: Աստուծոյ կրակն է թափ-
ւում քո ունեցած չունեցածիդ վերայ. մարդիկների անէծքն
եւ լսում քո կեանքիդ վերայ, սիրտ, ուրախութիւն չկայ
վրագ թէ բանի, գործի վերայ եղած ժամանակդ, թէ հան-
գստանալուդ միջոցում, ինչ բան որ միտք ես անում անե-
լու, ինչ գործի որ ուղուածես կաշել սիրտդ վախ է ընկնում

ու այդ երկիւղը չէ թողնում որ անես մտքինդ, կասկածանքներդ քո պիտոք միտքդ աւելի պիտօրումեն, մինչեւ անգամ աղօթք անել եւս չես կարողանում առանց վախի, առանց անհանգիստ լինելու. ա՛խ վերջդ եւս ի՞նչ պէտք է լինի, մի օրհոգիդ եւս յուսահատութիւնի մէջ փչե՛լը: Զո՛ւր է, որ ուզումես մտքիդ մէջինը հանես, քեզանից հեռացնես, ցրես. դուր ես ուզում խեղդել քո մէջդ քո վատ արարմունքիդ յիշատակը, երբ որ միտքդ է ընկնում ու միտք ես անում քո արածներդ, քեզ սաստիկ չարչարումեն. քանի որ դումես մտքիցդ հանիր, կամ քո մէջդ խեղդիր, դարձեալ միտքդ կընկնեն ու նորից կչարչարեն: Աւրեմն վերջ գե՛ր. վերջացուր այն կերպով, ինչպէս որ կվայելէ մի քրիստոնէի. հատուցումն արա, տեղը հանիր. յետ դարձուր, ինչի մէջ որ խաբել ես, ինչ որ գողացել ես, ինչ որ քեզ ես պահել, քեզ անիրաւ բաժին հանել ուրիշի բանը:

Հասոցանա՛ւ աչա, փոխարինիր: Քո խի հանգստութիւնդ, քո խի բախտաւորութիւնդ, քո պատիւդ, քո ապագայդ, որ կուզես ունենալ ու պիտի ունենաս մարդիկների մէջ, քո վերջդ, մահւանիցդ յետոյ, պահանջումեն, որ այդ անես: Ի՞նչն է ձեռքդ բռնողը, ի՞նչը չէ թողնում, որ այդ անես: Կարելի է որ այլ եւս այս աշխարհումն չէ այն մարդը, ում որ դու պարտական էիր քեզ համարում հատուցումն անել, Բայց նա ունի զաւակներ, մօտիկ ազգականներ, իւր իրաւունքի ժառանգներ: Նոցա հասցուր, նոցա փոխարինիր, ինչ որ վախճանող մարդին քեզ պարտական էիր ճանաչում: Կամ կարելի է, որ դու շատ հեռու տեղ ես բնակւում այն մարդից, ում որ դու ծածկաբար դեռ եւս քեզ պարտաւոր ես համարում: Եթէ որ նա ողջ է, ոչ մի հեռաւորութիւն պատճառ չէ, որով զժլար լինի քեզ փոխարինել նորան այն, ինչ որ նա քեզանից պահանջելու իրաւունք ունի:

« Քիչն) որ ունի արդար մարդն, աւելի լաւ է » — ասումէ Աստուծոյ խօսքը, քան թէ անասուածների շատ ունեցածը: Պատճառ որ անասուածների ձեռքը կկտորւի, բայց Աստուածապաշտ մարդիկների օրերը գիտէ Տէրը եւ նոցա ինչքը յաւիտեան կմնայ: Անաստուածը փոխ է աւանում ու չի տալի. բայց

Աստուածապաշտ մարդը ողորմած է եւ քաղցր: Պատճառ Աստուծոյ օրհնածնները երկիրը կժառանգեն, իսկ իւր անիծածները կկորչին: Փոքր էի ես ու հասակս առի ծերացայ, ու երբէք արդար մարդին արհամարած չտեսի, կամ թէ նորա զաւակը ողորմութիւն հաւաքելիս: Ուրեմն թող չարն ու հեռու կաց, բարին արա եւ միշտ անխարդախ, ճշմարիտ եղիր :

Գրէ՛ք. Եղի՛ր. Աղա՛ք.

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ ՉՕՐԱՎԱՐԱՅ

ՉՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ.

(ԱՐԻՒՄ 1881 Ք. Բ.)

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ

Ահա նշան սիրոյ արեաց արքայի զի զի շինչն ինի իւր արջ Մանգիւրի, Արթիւ և Գրեթիւ ինքնին):

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ.

Հազարու դորանց նաև մի մի ընտիր վերարկու պարսկական, ես արժան համարիմ այս պատական նախարարները Սասանեան տոհմի մէջ նշանակել և Արեգական որդի համարել:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ.

Արժանի են և այդ փառաց, (իւր հարցնէ զի զի պարսկան վերարկու իւր հարցնէ նաևն):

Ո Ր Մ Ջ Պ Ա Ն.

Տէր արքայ, դոքա արժանի են և մոգական պատուոյ և փառաց, (Հայ ներդրոյ) ահա ձեզ պատկեր արեգական, որ իւր լուսով և ջերմութեամբ պահպանում է աշխարհի գոյութիւնն, (զի զի նշան ինի իւր արջ Հայ ներդրոյ ինքնին արեթիւ ին ճանաչելով):

Գ Ա Ր Ե Պ Ի Ն.

(ինչին) Սոքա կամենում են մեր մար Պինը զարգարելով հոգիներս կողոպ-